

Կ-110²-03.10.2012-ԱՀ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածում տասներորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերը որոշվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:»:

Հոդված 2. Օրենքի 38-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 33-36-րդ հոդվածների համաձայն, զինծառայողներին և նրանց հավասարեցված անձանց մատուցված ծառայությունները կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները եկամտային հարկով հարկման նպատակով ընդունվում են որպես նվազեցվող եկամուտներ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,
 «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու
 մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և
 փոփոխություն կատարելու մասին», «Փրկարար ծառայության մասին»
 Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության
 մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Դատական ակտերի
 հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հան-
 րապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ
 ներկայացված առաջարկությունների**

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով վերախմբագրվող՝ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծով լրացում կատարել «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում՝ ամրագրելով, որ ծառայության նոր վայր տեղափոխվելու և միանվագ դրամական օգնությունների չափերը հաշվարկելու համար պաշտոնային ու զինվորական կոչման դրույքաչափերը որոշվում են ՀՀ կառավարության	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:

	կողմից սահմանված պաշտոնային ու զինվորական կոչման դրույթաչափերի ու դրանցից պահված եկամտային հարկի տարբերության չափով:		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «ծևով ստացված եկամուտները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև պարտադիր ծառայության զինծառայողների և կուրսանտների դրամական բավարարումը և դրան հավասարեցված վճարումները» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով (լրամշակված տարբերակում` 2-րդ հոդվածով) վերախմբագրվող` «Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում «զինծառայողներին» բառից հետո լրացնել «և նրանց հավասարեցված անձանց» բառերը:	Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: